

գիլուեցան իրենց պաշտօնը կատարելէ (Han. T. էջ 110):

Ս. Յարութեան եկեղեցիի բակին մէջ, զրոյցի մը համաձայն, Թափառական հրէան անգամ մը մէկ վայրկեան կանգ առած է իւրաքանչիւր դարուն ընդունուելու համար, սակայն, ձայն մը կը լսէ ան, որ իրեն կը հրամայէ վերսկսիլ իր անվերջանալի ճամբորդութիւնը (Tent work in Palestine Ս. հատ. էջ 330, Conder):

5. Զուար ձիյերնի Օղլու հայ ֆահանային ֆաղած սեղեկութիւնները այս մասին. — «Ապա զնամք Սուրբ Յարութեան գրան աջ կողմն, որ ասացի թէ երեք երեք սիւն կայ երկու կողմն. այս կողմի երեք սեանն մէջտեղի սիւնն պատառեր է թիրիզի նման մէկ ու կէս արշուն կայ, զպատճառն սորա պատմենք. ոմանք կ'ասեն թէ բազում աղքատ մնացեր է դուրս եւ ոչ են առեալ ներս. նորա համար պատառեր է սիւնն այն, եւ անտի ելեր է լոյսն. — ոչ այդպէս, այլ առաջի ժամանակն՝ միւթէվէլլիի քով եազըճին հրէայ է եղեր. տեսեր որ այնպէս հրաշք կը լինայ՝ նախանձ կ'անէ կ'ասէ թէ գալու տարի բան ինչ խորհիմ, եւ միւթէվէլլուն միտքն կու գողանայ մինչեւ հազար դուրուշ կուտայ թէ խթման օրն մի՛ բանար, սոքա որ կան սուտ են՝ ըսելով. և նա կու հաւանի նորա խօսացն և կ'առնէ զհազար դուրուշն. և խթման օր ուխտաւորք կու ժողովին ի մի տեղ, թէ մտնանք ներս որպէս սովոր է: Այս միւթէվէլլին չբանար ըզդունն. հայք, ֆռանք և յոյնք, վէքիւք եւ թէրճիմանք ի մի տեղ կուգան, թէ ընդէ՞ր այսպէս կ'անես. և նա պատասխանեալ թէ այս օր չեմ բանար, բայց»